

Թիւնները պատահել են երկու տարբեր ձե-
ռադրերում որոնցից և այժման երկու զը-
խաւոր դասի ձեռադրերի օրինակներն են ծա-
ղում: Այս իսկ պատճառով Բ դասի ընթեր-
ցուածը ևս ընտրելագոյն եմ համարում իր-
րե ընդմիջարկութեան հետքը պահող ըն-
թերցուած մինչդեռ Ա դասը անհետացրել է
այդ հետքն անգամ:

«Սաւարծի» կամ «հաւարծի» բառը —
լոկ ուղղադրական տարբերութիւն — խաւարտի
նման յայտնի բառ է և վկայութիւններ ունի
նոյն իսկ Ե-դ դարից և նշանակում է հ-հ-
թերեւս և՛ խաւառ (ՀՅԻ, բառ.): Կարծում
եմ թէ այս բառը նոյն դեռ չբացատրուած,
կազմութիւնն ունի ինչ որ Բա—Բա—Բա,
այսպէս և Բա—Բա—Բա: Կամ թէ չէ՝ այս
էլ լուսանցքից մտած բառ է Բա—Բա աղջա-
տուած բառը լուսարանելու համար ինչպէս
որ Բա—Բա վերելում: Մանաւանդ որ Հին
բառգիրքը (ցուց. Գեորգ կթ-սի № 39)
Բա—Բա մեկնում է այսպէս. «խաւար կամ խա-
ւարծի, զոր իշխուն ասեն», ուստի և հա-
ւանական է որ «հաւասար խաւարտ, խաւար-
ծի» միասին գրուած էին լուսանցքում իր-
րե մեկնութիւն «զարտախուրի» և յետոյ մի-
այն, բնագրի մէջ մտնելիս անջատուեցան:

Այսպիսով ուրեմն կատանանք հետեւեալ
լուսարանուած բնագիրը.

«Այլ և տենչայ (ասեն) Սաթենիկ (տիկին)
տենչան՝ զարտախուր [հաւասար խաւարտ]
* զտից [խաւարծի] ի բարձիցն Արղաւանայ:

— Տիկին Սաթենիկը ցանկանալով ցանկա-
նում է Արղաւանի բարձերից՝ զխաւարի արտ-
ախուրին: Իմաստը պարզ է:

Սաթենիկ և Սաթենիկ ձևերից երեւի հը-
նագոյնն է Սաթենիկ: Իսկ Սաթենիկ, եթէ
միայն բէն յետասմուտ չէ, թերեւ աւելի ևս
հին է և այս դէպքում կարծեմ հնարաւոր
է ժողովրդական արտասանութեամբ մեկնել՝
սարթենիկը իրրե սարգենիկ, իսկ սարգենիկ =
սարգենի սարգենիներ, ինչպէս որ Վարսե-
նիկ = վարսաւոր, վարգենիկ = վարգենիք, վար-
գենիս՝ Հ. Բ. տես և Պարթնենիկ = զարխե-
նի (ՀՅԻ, բառ.):

Այս դէպքում Սարթենիկ կարելի է մեկ-
նել իրրե Laura, արեւմտեան բանաստեղծնե-
րից այնչափ երգուած Լաուրան: Յայտնի է
որ՝ բոյսերի, ծաղիկների, զոհարների անուն-
ներ էին մեր կանանցից շատերի անունները:

Վերջացնելը մեր խօսքը տալով մի քանի տեղե-
կութիւն խաւարծիի մասին, որ Խորենացին
մեկնողները ընդհանրապէս նոյնացնում են խաւար-
ծի բառին հետ, Խաւարծի ճանգիպում է և խոր-
ծուի, խաւարծի և այլն ձևերով (ՀՅԻ, բառ.) բայց
երբէք՝ խաւարծի, Լեհացու բառարանի տուած
մեկնութիւնը յայտնի է (ՀՅԻ, բառ.): Հին ձեռ. բա-
ռարանները մեկնում են. «իշխուն խաւար է»: Հայ-
կունին իւր ժողովածուի մէջ գրում է (անտիպ).
«խաւարծի, որ կարնեցիք իշխուն կրսն», ըն-
տիր, քաղցր ու թթուաշ կանանց մէ, որ սարիքը
կաճի, ձեան բարձրանալու միջոցին: Արմատից դը-
մի տերեւի նման տերեւ կրունի, որոց միջից կարծ-
րանայ, ըստ ալաշկերտոց որձան, որ կէս կան-
դուն բարձր և տափակ է, Վերայի կեղևը քաշն,
կհանն, կուտն (ոչ կեղևը), Գգմի նման թաւոտ
է. Ծայրը ունի մանր ծաղիկ, Ալաշկերտի խաւր-
ծի շատ համեղ է, Հայկունին առաջ է բերում
նաեւ այս հանելուկը.

- « Հանելուկ, հանմանելուկ,
- « Ծէրն ի ծաղիկ, տակն աւելուկ,
- « Թէ հանես՝ ծէրն ուտես,
- « Թէ չհանես, տակըն ուտես ».

(Խաւարծի).

Պէտք է նկատել, որ «որձա» բառը գործ է ած-
ւում ոչ միայն խաւարծիի, այլ բոլոր բանջարների
ցողունի համար. այս բառին աղգակից է և արդ-
րումցիների «որձոլա» բառը (= արու բոյս, աղջիկ
որ կանացի չէ, այլ նմանում է բնութեամբ կամ
վարմունքով այր մարդու, = կոպիտ). Վեպի խա-
ւարծին (եթէ միայն նոյնանիչ է խաւարծիի և չէ
ընդմիջարկութիւն) չէ՝ արգեօք ակնարկութիւն առ-
անգամի:

ՄԻԱԲԱՆ.



ՄԵՆ ԿՐԻՏԻԿՈՍԸ



II.

Նշով է արտայայտուել մեր հեղինակի գրա-
կան և գիտնական գործունէութիւնը:

Տէնի գրուածները բազմաթիւ են և նոցա բո-
վանդակութիւնը հարուստ և բազմատեսակ, Փիլի-
սոփայ, հոգեբան և կրիտիկոս, պատմաբան և հրա-
պարակախօս, իւր հայրենակիցների և օտարների
հասարակական բարքերն ուսուճնափրող — ահա Տէնը

որպէս գիտնական և մատենագիր։ Արքան դժուար է ըստ երևութիւն այդքան բազմակողմանի հեղինակի հետ ծանօթանալը։ սակայն Տէնը այն գրողներից է, որոնք իրանց իւրաքանչիւր գրութեան մէջ երևան են հանում պարզ և որոշ ընդհանուր աշխարհայեցութիւն։ որոնք ամեն կարգի երեւոյթների նկատմամբ դործադրում են պարզ և որոշ մեթոդ և գրա հետ միասին, այնքան գրաւիչ, այնքան գեղարուեստական ձևերի մէջ են ամփոփում իրանց գաղափարները, որ նրանց ուսումնասիրելը դառնում է մի հաճելի մտաւոր և գեղագիտական դրօսանք։

Տէնի ընդհանուր աշխարհայեցութիւնը մշակուեց այն ժամանակ, երբ գիտնականները ճիշդ մեթոդներ էին որոնում բարոյական գիտութեանց համար։ Գրական փիլիսոփայութեան հիմնադիրը՝ Օգիւստ Կոնտ՝ սահմանափակել էր գիտական ուսումնասիրութեան շրջանը, դուրս ձգելով դրական գիտութեանց շարքից այնպիսի գիտութիւններ, որպիսիք էին պատմութիւնն ու իմաստասիրութիւնը։ Նրանից մի քայլ առաջ էր արել Մտիւարտ Միլլը, գիտական հիմնադրների վրայ գնելով արամարանութիւնը և պաշտպան հանդիսանալով հոգեբանական գիտութեան։ Աւսումնասիրելով իւր նախորդ սրբիլիստիկոսների (1) և գերմանական բնագիտագէտների (Հեգելի) գրութեանը, Տէնը հասաւ այն մտքին, թէ կարելի է ընդարձակել նոցա հարթած ճանապարհը, թէ կարելի է հաշտեցնել անգլիական փիլիսոփայութիւնը գերմանացոց տեսական փիլիսոփայութեան հետ և հաշտեցնողները պիտի լինին ֆրանսիացիք։ «Թւ դարում մենք ընդլայնեցինք անգլիական գաղափարները, ԺԺ դարում մենք կարող ենք աւելի մեծ ճշտութեամբ որոշել գերմանացոց գաղափարները։ մեր դարձն այն է, որ մեղմենք, ուղղենք և լրացնենք մի ոգին միւսի միջոցով, ձուլենք նրանց ի մի ուղղութիւն, և արտայայտենք նրան այնպիսի ձևով, որ հասկանալի լինի ամբողջ աշխարհին և դարձնենք նրան ընդհանուր սեփականութիւն։ — Տեսնենք, ինչպէս է դիմում Տէն իւր նպատակին։

Նախ և առաջ նա վերլուծութեան է ենթարկում գաղափարները, բոլոր գաղափարները վերածելով ֆակտերի (2) և ֆակտերի փոխադարձ յարաբերութեանց։ Արեւէ առարկայի գործառնութիւնը ֆակտերի մի խումբ է, որոնք նպատաւ են ընդհա-

նուր նպատակին, որեւէ էակի բնութիւնը՝ նրան կազմող զլխաւոր և յատկանիշ ֆակտերի խումբ է։ ա՛ն հաստը — փոխադարձաբար իրարից կախում ֆակտերի որոշ սխառմէ։ Այսպիսով գիտութիւնը կազառուի խորհրդաւոր և բնագիտական տարրից, դա փոքր գործ է և դա բարի գործ է, ասում է Տէն։ Երկրորդ քայլն այն է որ վերլուծենք ֆակտերը՝ նրանց բազմացնելու համար։ Հետագայ ֆակտը մի էր թւում, ի մօտոյ հետադառուելով՝ նա բազմանում է։ Գրական գիտութեանց իսկական յառաջագիմութիւնը մի ընդհանուր անորոշ ֆակտ բազմաթիւ ճիշդ ֆակտերով փոխարինելն է։ Նոցա ամբողջ գործը և ամբողջ յաջողութիւնը երեք հարիւր տարուայ ընթացքում այն է, որ արտաքին փորձին մատչելի խոշոր զանգուածները կերպարանափոխուել են ֆակտերի ճիշտ և մանրամասն ցուցակի, այնպիսի ֆակտերի, որոնք օրէցօր աւելի և աւելի տարրալուծուում են և բազմանում։ Բարոյական գիտութեանց, ինչպէս և ֆիզիկական գիտութեանց մէջ յառաջագիմութիւնը կայանում է անալիզի (1) գործադրութեան մէջ և անալիզի ամբողջ քանքը՝ որոշ անունով յայտնի ֆակտերը բազմացնելը պիտի լինի։ Tout l'effort de l'analyse est de multiplier les faits que désigne un nom. Բայց սորա միայն առաջին քայլերն են, միայն սկիզբն է գիտութեան, այդ քայլերից առաջինը չարած, հետադառողը բնագիտական էութիւնների հետեւից է ընկնում։ առանց երկրորդ քայլին նա պէտք է կանգ առնի իւր հետադառութեան մէջ։ Բայց այսու ամենայնիւ այս միայն սկիզբն է, որ պէտք է ունենայ իւր շարունակութիւնը։ Այդ շարունակութիւնը սինթէզի, համադրութեան մէջ է կայանում։ ֆակտերի իւրաքանչիւր խումբը նոցա պատճառին ստորագրելու մէջ է կայանում։ Այս պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ֆակտ։ Դա մի ֆակտ է, որից կարելի է դուրս բերել ուրիշ ֆակտերի ընութիւնը և փոփոխութիւնը։

Իւր միտքը պարզելու համար Տէնը բացատրում է թէ ինչ է կենդանու փոփոքը։ Արեւէ կենդանու փոփոքը իւր հաստատ և որոշ ձևն է, որ անցնում է սերնդէ սերունդ, նա էական է, որովհետեւ եթէ խախտուեց, կենդանին կը կորչի կամ նորից կը վերաստեղծուի։ Նա յատկորոշ է, որովհետեւ նորան հակառակ՝ անկենդան մարմինը կարող է անսահման փոփոխուել իւր մեծութեամբ և ձևով, առանց իրան վերաստեղծելու և առանց կորչելու։

Տիպը այսպիսով մնացեալ բոլոր բաների պատճա-

(1) Կոնտը և իւր հետեւողները կոչւում են պոզիտիւստիկոսներ։ Այս անունը առաջացել է լատինական positivus կամ ֆրանսիական positif (գրական) բառից։

(2) Ֆակտ՝ լատիներէն factum, ֆրանսերէն fait, իրողութիւն։

(1) analyse, յունարէն և ֆրանսերէն՝ վերլուծութիւն, լուծումն։

որն է, Նրանից կարելի է դուրս բերել չափահաս կենդանին կազմող բոլոր ֆակտորները: Այդ ֆակտորն իւրաքանչիւր խումբը դուրս է բերուում մի որեւէ գերիշխող ֆակտից: Իսկ այս բոլոր գերիշխող ֆակտորը պէտք է դուրս բերուին տիպից: «Այն ժամանակ մեր առաջ կը մնայ միայն մի միակ բանաձև, որից հետո՞ց հաւանարգութեան միջով կը բղխի մնացեալ ֆակտորն ամբողջ կազմակերպեալ բազմութիւնը:

Նոր այն ինչ որ այստեղ ցոյց է տուած մի օրինակով, անուի բոլոր շրջաններում և բոլոր գիտութեանց համար:—տիեզերքը այն ձևով, ինչպէս այժմ մենք նրան ըմբռնում ենք, կը չքանայ, ֆակտորը կը կրճատուին, նոցա տեղերը կը բռնեն բանաձևերը: Եւ նոցա մէջ մենք կը գտնենք տիեզերքի միութիւնը և կը հասկանանք այն՝ ինչ որ նրան ստեղծել է: Նա՞ տիեզերքը՝ առաջացել է միւս ֆակտորի նման՝ ընդհանուր ֆակտից, այն ստեղծագործող օրէնքից, որից միւսները բղխում են, Գիտութեան վերջնական նպատակը այդ գերագոյն օրէնքն է և ով կարողանար փոխադրուել նորա խորքերը՝ նա կը տեսնէր որ նորանից, որպէս գերագոյն աղբիւրից, բղխում է անցքերի յաւիտենական հոսանքը և երևոյթների անեզր ծովը: «Այստեղ մենք զգում ենք, ինչպէս է մեղանում սաղմ առնում բնութեան գաղափարը: Անհրաժեշտ օրէնքների այս համակարգութեան շնորհիւ աշխարհը կազմում է մի անբաժան էակ: Երևոյթների բարձրութեան վրայ արտասանուած յաւիտենական ճշմարտութիւնը և այդ ստեղծագործիչ բանաձևի անլուռ արձագանգը իւր անսպառելի ալիքներով կազմում է տիեզերքի անսահմանութիւնը: Ամենայն ձև, ամենայն փոփոխութիւն, ամենայն շարժում, ամենայն գաղափար մէկն է նորա գործողութիւններից: Նա յարակալ է ամեն բանի մէջ և չէ սահմանափակուած ոչ մի բանով: Նիւթ է միտք, մոլորակ և մարդ, կենք և մահ, վիշտ և ուրախութիւն, չը կայ ոչինչ, որ նորան չարտայայտէր, և չը կայ ոչինչ որ նորան լրիւ արտայայտէր: Նա լցնում է ժամանակն ու տարածութիւնը և մնում է ժամանակից ու տարածութիւնից վեր: . . . Ամենայն կենք նորա վայրկեաններից մէկն է, ամենայն էակ՝ նորա ձևերից մէկը, և իրերի շարքերը ելնում են նորանից՝ անխորտակելի անհրաժեշտութեան համաձայն, նորա ոսկէ շղթայի աստուածային օղակներով կապուած: Անտաբեր, անշարժ, յաւիտենական, ամենազօր, ստեղծագործիչ—չը կայ անուն՝ նորան սպառող, և երբ բացում է նորա պայծառ և վսեմ երեսը, չը կայ մարդկային ոգի, որ չը խո-

նարհի զարմանքից և երկիւղից խռուուած: Բայց նոյն ակնթարթում՝ այդ ոգին բարձրանում է. նա մոռանում է իւր մահացութիւնն ու փոքրիկութիւնը. նա վայելում է համակրութեամբ նրա միտքը պաշարող այդ անսահմանութիւնը և մասնակցում է նորա մեծութեանը:

Ե. ՄԱԿԱԹԵԱՆ:



ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՅ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՏԱՅԼԱԺ ԳՈՒՄԱՐՆԵՐ:

Վեհափառ Հայրապետի Ս. Էջմիածին ժամանելուց մինչև այսօր Վեհարանում ստացուած գրամական նուիրաբերութիւնները սօքա են:

Մեծ. ժամհարեան եղբայրները նուիրեցին 17000 ռուբլի անձեռնմխելի որի տոկոսը պիտի գործադրուի կրթական նպատակով:

Մոսկվայեանկ Նոր-Նախիջևանցի հայերն նուիրեցին	3000 ռ. — կ.
Վարշավաբնակ հայերն	400 » — »
Եկատերինոգրարի հայերն	520 » — »
Վարշավայի հայերն կրկին	490 » — »
Բագուաբնակ հայերն	2200 » — »
Մոսկվայից ժամհարեան եղբայրներն կրկին	2000 » — »

Ուրեմն ընդ ամէնն 25,610 ռուբլի:

Այս գումարից հանելու է մեծ. ժամհարեանների կրթական նպատակով նուիրած անձեռնմխելի 17 հազար ռուբլի:

Ուստի Վեհ. Հայրապետի անպայման տրամադրութեան յանձնելով ստացուած է միայն 8610 ռուբլի: Այս գումարից Վեհ. Հայրապետը բարեհաճեց 2000 ռ. ուղարկել կ. Պոլսի Հայոց Ս. Պատրիարքին սովեալներին հասցնելու. իսկ մնացեալ գումարից ահա վեց ամիս է, որ առաջ էր հարկւրաւոր երկու սեռի և ամեն հասակի սոված և մերկ զաղթականներ և տեղական բնակիչներ զիմում են Նորին Վեհափառութեան և զբամական ու բարդական միսիթարութիւն ստանալով հեռանում են Վեհարանից, օրհնելով Հայոց ազգի բարեսէր և եղբայրասէր նուիրատուներին: Միեւնոյն միջոցին, Վեհ. Վաթիկանի սնուրինութեամբ, կարօտեալներին մասնատրուում է զբամական օգնութիւն Մայր Աթոռի գանձապահի միջոցով:

